# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**23 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1970-Ա**

## ՀՈՂԱՄԱՍԻ, ԳԾԱՅԻՆ ՉԱՓԵՐԻ ԵՎ ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԻ ՈՒՂՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.04.2021թ. N 698-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ Սևան համայնքի հերթապահ էլ. քարտեզում առկա են անճշտություններ, որի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել փոփոխել՝ սեփականության իրավունքով քաղ. Ռոմիկ Կյուրեղյանին պատկանող, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 143 շենքից արևմուտք հասցեում գտնվող 0.00280 հա մակերեսով հողամասի / վկայական՝ N 2481054./ գծային չափերը և երկրաչափական պատկերը, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձի կողմից կատարված չափագրությունների արդյունքները, ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Ուղղել և հաստատել՝ ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 143 շենքից արևմուտք հասցեում գտնվող անշարժ գույքի գծային չափերը և երկրաչափական պատկերը:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 23
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**23 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1971-Ա**

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 19.11.2024թ. N146-Ն որոշման 2-րդ կետի և հաշվի առնելով քաղ. Գոռ Սարգսյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Ձևակերպել կառուցապատող Գոռ Սարգսյանի կողմից իրականացված՝ Սևան համայնք, ք. Սևան, Շահումյան փողոց թիվ 35 / 71 hասցեում գտնվող հողատարածքում կառուցված առևտրի սրահի շահագործման թույլտվությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 23
ք.Սևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**23 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1972-Ա**

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 19.11.2024թ. N146-Ն որոշման 2-րդ կետի և հաշվի առնելով Գոռ Սարգսյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Ձևակերպել կառուցապատող Գոռ Սարգսյանի կողմից իրականացված՝ Սևան համայնք, ք. Սևան, Շահումյան փողոց 35 շենք թիվ 49 հասցեում գտնվող հողատարածքում կառուցված ծածկարանի շահագործման թույլտվությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 23
ք.Սևան

2032

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

# ՈՐՈՇՈՒՄ

**23 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1973-Ա**

## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Գ. ՉԿԱԼՈՎԿԱ, 1-ԻՆ ՓՈՂՈՑ, 2-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 2 ՏԱՆ ԲՆԱԿԻՉ, «ԱՍԼԱՆԻ ՏՆԵՐ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ ՎԱՂԱՐՇԱԿ ԱԴԻԲԵԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով «Ասլանի տներ» ՍՊԸ–ի տնօրենի նկատմամբ հարուցված վարչական վարույթի նյութերը պարզեցի. ՀՀ ՇՄՆ էկոպարեկային ծառայության կողմից 20.08.2025 թվականին կազմված արձանագրության համաձայն՝ «Ասլանի տներ» ՍՊԸ-ին պատկանող, Չկալովկա գյուղի հարակից առափնյա տարածքում առկա են շինություններ: Ենթադրվում են, որ այդ շինությունները ինքնակամ են տեղադրված կամ կառուցված: Օրենքով սահմանված կարգով ՍՊԸ–ի տնօրենը հրավիրվել է Սևանի համայնքապետարան պարզաբանումներ տալու նպատակով: 08.09.2025 թվականին Վաղարշակ Ադիբեկյանը հայտնել է, որ հողատարածքում նախկինում առկա է 7 վագոն տնակներ և տաղավարներ: Փաստացի այդ շինությունները տեղադրվել են ՀՀ կառավարության 24.09.2001 թվականի 896-Ն և 19.03.2015 որոշումների պահանջների խախտումներով, առանց տեղադրման թույլտվության առկայության: Կարևոր հանգամանք է նաև, որ հողամասը հանդիսանում է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին պատկանող պետական սեփականության բնության հատուկ պահպանվող հողատարածք: Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով՝ **որոշում եմ**.

1. «Ասլանի տներ» ՍՊԸ–ի տնօրեն Վաղարշակ Ադիբեկյանի նկատմամբ նշանակել վարչական տուգանք մեկ հարյուր հազար դրամի չափով:
2. Պահանջել «Ասլանի տներ» ՍՊԸ–ի տնօրենից՝ ապամոնտաժելու տարածքում գտնվող շինությունը և տարածքը բերել նախկին տեսքի:
3. Պահանջել «Ասլանի տներ» ՍՊԸ–ի տնօրենից՝ տարածքի կառուցապատումն իրականացնել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:
4. Տուգանքի գումարը կամավոր վճարել 15-օրյա ժամկետում Սևանի համայնքի բյուջեի 900165101123 հաշվեհամարին:
5. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերի պահանջները չկատարելու դեպքում հարցը լուծել օրենքով սահմանված դատական կարգով:
6. Սույն որոշումը կարող է բողոքարկվել 15 օրյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան երկու ամսվա ընթացքում:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 23
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**23 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1974-Ա**

## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 09.06.2025Թ. N 1158-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝**որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 09.06.2025թ. «Հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N 1158-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

1) «Օրինական ճանաչել 70.12քմ մակերեսով շինության քանդման աշխատանքները»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 23
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


## ՈՐՈՇՈՒՄ

**23 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1975-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՄԱԿԵՐԵՍԻ, ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԻ ԵՎ ԳԾԱՅԻՆ ՉԱՓԵՐԻ ՈՒՂՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն, 29.04.2021թ. N698-Ն որոշումներով, հաշվի առնելով, որ Սևան համայնքի հերթապահ էլ. քարտեզում առկա են անճշտություններ, որի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել փոփոխել՝ քաղ. Դավիթ Ջանիկյանին պատկանող, Սևան համայնք, գ. Սեմյոնովկա, 2-րդ փողոց թիվ 101 հասցեում գտնվող հողատարածքի /կադաստրային ծածկագիր՝ 05-079-0136-0124 / մակերեսը, երկրաչափական պատկերը, գծային չափերը, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձի կողմից կատարված չափագրությունների արդյունքները՝ **որոշում եմ.**

1. Ուղղել և հաստատել Սևան համայնք, գ. Սեմյոնովկա, 2-րդ փողոց, թիվ 101 հասցեում գտնվող հողատարածքի մակերեսը, երկրաչափական պատկերը և գծային չափերը:
2. Ճանաչել ինքնակամ հողատարածքում կառուցված 134.84քմ մակերեսով ավտոտեխսպասարկման կայանը, 11.90քմ մակերեսով ծածկը և 18.67քմ ընդհանուր մակերեսով պատը:
3. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 23
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**23 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1976-Ա**

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևանի Յա. Զարոբյանի անվան Հ.2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի /տնօրեն՝ Կ. Գևորգյան/ դիմումը՝ **որոշում եմ.**

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևանի Յա. Զարոբյանի անվան Հ.2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին /տնօրեն՝ Կ. Գևորգյան/ տրամադրել շինարարության թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Խաղաղության փողոց թիվ 3 հասցեում ջեռուցման համակարգի կառուցման համար:
2. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևանի Յա. Զարոբյանի անվան Հ.2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը /տնօրեն՝ Կ. Գևորգյան/ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևանի Յա. Զարոբյանի անվան Հ.2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը /տնօրեն՝ Կ. Գևորգյան/ պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 23
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**23 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1977-Ա**

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով քաղ. Արամ Ղարիբյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Արամ Ղարիբյանին տրամադրել շինարարության թույլտվություն Սևան համայնք, գ. Լճաշեն, 19-րդ փողոց թիվ 15 հասցեում այգետնակի, խորդանոցի և ցանկապատի կառուցման համար:
2. Արամ Ղարիբյանը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. Արամ Ղարիբյանը պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 23
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**23 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1978-Ա**

## «ՄԵՐՊՈ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ ՄԵՐՈՒԺԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով «ՄԵՐՊՈ» ՍՊԸ-ի տնօրեն Մերուժան Պետրոսյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի նյութերը պարզեցի․ ՀՀ Քաղաքաշինության տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի, ՀՀ Գեղարքունիքի Քաղաքաշինության տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի գրությունների համաձայն՝ «ՄԵՐՊՈ» ՍՊԸ-ի տնօրեն Մերուժան Պետրոսյանի նկատմամբ Սևանի համայնքապետարանում հարուցվել է վարչական վարույթ ինքնակամ շինության կառուցման փաստով: Վարույթի ընթացքում անհրաժեշտություն է առաջացել 2025թ. օգոստոսի 21-ին հարուցված վարույթը կասեցնել: Վարույթը վերսկսվել 2025 թվականի սեպտեմբերի 10-ին: Համայնքապետարանի տեղազննող հանձնախումբը նույնպես տեղում ուսումնասիրել էր կառուցված շինության փաստը: Շինությունն իրենից ներկայացնում է մետաղական կոնստրուկցիաներով ծածկարան, որի սյուները դրված են բետոնյա հիմքերի վրա: ՍՊԸ-ի տնօրենը հրավիրվել է համայնքապետարան պարզաբանում տալու նպատակով: Ըստ այդ պարզաբանումների, շինությունը կառուցվել է 2020 թվականին: Ըստ տնօրենի՝ դա հանդիսանում է ոչ հիմնական շինություն: Սակայն «Google Earth» ծրագրով հիմնավորվում է որ շինությունը կառուցվել է 2023 թվականին: ՍՊԸ-ի տնօրենի կողմից խախտվել է ՀՀ կառավարության՝ 19.03.2015թ. N596-Ն որոշման և Քաղաքաշինության մասին ՀՀ օրենքի պահանջները: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ հողատարածքը հանդիսանում է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին պատկանող, պետական սեփականություն հանդիսացող, բնության հատուկ պահպանվող տարածք: Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով՝ **որոշում եմ․**

1. «ՄԵՐՊՈ» ՍՊԸ-ի տնօրենի նկատմամբ նշանակել վարչական տուգանք հինգ հարյուր հազար դրամի չափով:
2. Պահանջել ՍՊԸ-ի տնօրենից՝ ապամոնտաժելու ինքնակամ տեղադրված շինությունը (ծածկարանը):
3. Տուգանքի գումարը վճարել 15-օրյա ժամկետում Սևանի համայնքի բյուջեի 900165101123 հաշվեհամարին:
4. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերի պահանջները չկատարելու դեպքում հարցը լուծել օրենքով սահմանված դատական կարգով:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել 15 օրյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան երկու ամսվա ընթացքում:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄԽԻՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 23
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**23 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1979-Ա**

## «ԹՐԻ ՄԻՐՄԵՅԴ ԲԻՉ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ ՀԱՄԱԶԱՍՊ ՀԵՆՐԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով «Թրի միրմեյջ բիչ» ՍՊԸ-ի տնօրենի նկատմամբ հարուցված վարչական վարույթի նյութերը պարզեցի. ՀՀ ՇՄՆ էկոպարեկային ծառայության կողմից 10.07.2025 թվականին կազմված արձանագրության համաձայն՝ ՍՊԸ-ին վարձակալության իրավունքով պատկանող հողատարածքում իրականացվել է ինքնակամ շինարարական աշխատանքներ: Սահմանված կարգով ՍՊԸ-ի տնօրենին ուղարկվել է ծանուցագիր Սևանի համայնքապետարան ներկայանալու և պարզաբանումներ տալու նպատակով: ՍՊԸ–ի տնօրեն Հ. Գրիգորյանի պարզաբանմամբ շինությունները առկա են եղել տարածքում մինչև իր տնօրեն դառնալը: Իսկ էկոպարեկային ծառայության կողմից արձանագրված կառուցվող շինությունը համայնքապետարանի և էկոպարեկային ծառայության աշխատակիցների պահանջով ապամոնտաժվել է: Իսկ մնացած շինությունները առկա են եղել 2004 թվականից: Փաստորեն, այդ շինությունները առկա են եղել մինչև ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 154-րդ հոդվածի փոփոխությունները (16.12.2021 ՀՕ-429-Ն): «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի առաջին և երկրորդ պարբերությունների համաձայն՝ իրավախախտում կատարած անձը ենթակա է պատասխանատվության իրավախախտումը կատարելու ժամանակ և վայրում գտնվող օրենսդրության հիման վրա: Վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերը հետադարձ ուժ ունեն, իսկ պատասխանատվություն սահմանող կամ այն ուժեղացնող ակտերը հետադարձ ուժ չունեն: «ՎԻՎ» օրենսգրքի 32-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ իրավական ակտով սահմանված շրջանակներում: (....) սույն օրենսգրքի և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան: ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 154-րդ հոդվածի 16.12.2021 ՀՕ 401-Ն օրենքի փոփոխությունը ուժի մեջ է մտել 2022 թվականի հունվարի 6-ին: Դրա արդյունքում 154-րդ հոդվածով նախատեսված սանկցիաները խստացվել են, իսկ դա նշանակում է, որ ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության ընդհանուր կանոնի համաձայն այդ ակտերը հետադարձ ուժ չունեն և դրանով նախատեսված սանկցիաները կարող են կիրառվել բացառապես 2022 թվականի հունվարի 6-ից հետո կատարված արարքների համար: Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի մինչև 2022 թվականի հունվարի 6-ից գործող 154-րդ հոդվածի, ՀՀ կառավարության՝ 24.09.2001թ. 896-Ն և 19.03.2015 թվականի N596-Ն որոշման պահանջներով՝ **որոշում եմ.**

1. «ԹՐԻ ՄԻՐՄԵՅԴ ԲԻՋ» ՍՊԸ-ի տնօրեն Համազասպ Գրիգորյանի նկատմամբ նշանակել վարչական տուգանք երկուհարյուր հազար դրամի չափով:
2. Պահանջել ՍՊԸ-ի տնօրենից՝ տարածքի կառուցապատումը իրականացնել ՀՀ օրենսդրության պահանջներին խիստ համապատասխան:
3. Առաջարկում ենք քաղաքացուց վարչական տուգանքի գումարը կամավոր վճարել 15-օրյա ժամկետում Սևանի համայնքի բյուջեի 900165101123 հաշվեհամարին:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել 15 օրյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան երկու ամսվա ընթացքում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 23
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**23 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1980-Ա**

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ջովաբերի Ե. Չարենցի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի /տնօրեն՝ Ա. Առաքելյան/ դիմումը՝ **որոշում եմ.**

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ջովաբերի Ե. Չարենցի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին /տնօրեն՝ Ա. Առաքելյան/ տրամադրել շինարարության թույլտվություն Սևան համայնք, գ. Ջովաբեր 1-ին փողոց թիվ 16 հասցեում ջեռուցման համակարգի կառուցման համար:
2. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ջովաբերի Ե. Չարենցի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը /տնօրեն՝ Ա. Առաքելյան/ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N2-5 ձևի տեղեկանք:
3. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ջովաբերի Ե. Չարենցի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը /տնօրեն՝ Ա. Առաքելյան/ պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 23
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**23 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1981-Ա**

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով «Սևանի ձկնաբուծական գործարան» ԲԲԸ-ի /տնօրեն՝ Կ. Հայրապետյան/ դիմումը՝ **որոշում եմ.**

1. «Սևանի ձկնաբուծական գործարան» ԲԲԸ-ին /տնօրեն՝ Կ. Հայրապետյան/ տրամադրել շինարարության թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Ձկնորսների փողոց թիվ 13 / 5 հասցեում պահեստի կառուցման համար:
2. «Սևանի ձկնաբուծական գործարան» ԲԲԸ-ն /տնօրեն՝ Կ. Հայրապետյան/ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. «Սևանի ձկնաբուծական գործարան» ԲԲԸ-ն /տնօրեն՝ Կ. Հայրապետյան/ պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 23
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


## ՈՐՈՇՈՒՄ

**23 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1982-Ա**

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 19.11.2024թ. N146-Ն որոշման 2-րդ կետի և հաշվի առնելով քաղ. Մեսրոպ Կնյազյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Ձևակերպել կառուցապատող Մեսրոպ Կնյազյանի կողմից իրականացված՝ Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 141 / 39 հասցեում գտնվող հողատարածքում խանութի վերակառուցման շահագործման թույլտվությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 23
ք.Սևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

# ՈՐՈՇՈՒՄ

**23 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1983-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.01080հա մակերեսով հողամասը /ք. Սևան/ ճանաչել համայնքային սեփականություն, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Նալբանդյան փողոց թիվ 28 / 31 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 23
ք.Սևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**23 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1984-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.00873հա մակերեսով հողամասը /ք. Սևան/ ճանաչել համայնքային սեփականություն, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Խ. Աբովյան փողոց թիվ 11 / 10 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 23
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**23 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1985-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.00600հա մակերեսով հողամասը /ք. Սևան/ ճանաչել համայնքային սեփականություն, տրամադրել Սևան համայնք, գ. Գագարին, Գայի փողոց թիվ 1 / 3 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 23
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**23 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1986-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.00260հա մակերեսով հողամասը /ք. Սևան/ ճանաչել համայնքային սեփականություն, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 177 / 30 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 23
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**23 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1987-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.01400հա մակերեսով հողամասը /գ. Ձովաբեր/ ճանաչել համայնքային սեփականություն, տրամադրել Սևան համայնք, գ. Ձովաբեր, 2-րդ փողոց թիվ 12 / 5 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 2-րդ կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 23
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**23 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1988-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-040-0251-0064 կադաստրային ծածկագրով /գ. Լճաշեն/, 6.45350հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության հողամասի նկատմամբ կատարել պետական գրանցում:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 3-րդ կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 23
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


## ՈՐՈՇՈՒՄ

**23 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1989-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-047-0133-0018 կադաստրային ծածկագրով /գ. Ծաղկունք/, 0.16578հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության հողամասի նկատմամբ կատարել պետական գրանցում:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 4-րդ կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 23
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


## ՈՐՈՇՈՒՄ

**23 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1990-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-047-0133-0012 կադաստրային ծածկագրով /գ. Ծաղկունք/, 0.33354հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության հողամասի նկատմամբ կատարել պետական գրանցում:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 4-րդ կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 23
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**23 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1991-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-047-0133-0024 կադաստրային ծածկագրով /գ. Ծաղկունք/, 1.8586հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության հողամասի նկատմամբ կատարել պետական գրանցում:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 4-րդ կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 23
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**23 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1992-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-047-0133-0010 կադաստրային ծածկագրով /գ. Ծաղկունք/, 0.18795հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության հողամասի նկատմամբ կատարել պետական գրանցում:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 4-րդ կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 23
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**23 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1993-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-047-0133-0014 կադաստրային ծածկագրով /գ. Ծաղկունք/, 0.13772հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության հողամասի նկատմամբ կատարել պետական գրանցում:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 4-րդ կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 23
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**23 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1994-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-047-0120-0004 կադաստրային ծածկագրով /գ. Ծաղկունք/, 0.20373հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության հողամասի նկատմամբ կատարել պետական գրանցում:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 4-րդ կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 23
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**23 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1995-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-047-0120-0003 կադաստրային ծածկագրով /գ. Ծաղկունք/, 0.82867հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, վարելահող՝ գործառնական նշանակության հողամասի նկատմամբ կատարել պետական գրանցում:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 4-րդ կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 23
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**23 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1996-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 27.04.2006թ. «ՀՀ կառավարության՝ 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 844-Ն որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետով, հիմք ընդունելով «ՊՐԵԶԻԴԵՆՏ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի տնօրեն Ս. Բարսեղյանի դիմումը՝ սեփականության իրավունքով «ՊՐԵԶԻԴԵՆՏ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ին պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գյուղ Սեմյոնովկա, 1-ին փողոց թիվ 60 / 1 հասցեում գտնվող անշարժ գույքի / վկայական՝ 29072025-05-0017/ զբաղեցրած 0.0557հա մակերեսով տարածքն ընդլայնելու մասին, հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գյուղ Սեմյոնովկա, 1-ին փողոց թիվ 60 / 1 հասցեում գտնվող 0.0557հա մակերեսով հողատարածքն ընդլայնելու նպատակով Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գյուղ Սեմյոնովկա, 1-ին փողոց թիվ 60 / 2 հասցեում գտնվող 0.01898հա մակերեսով հողատարածքը /վկայական՝ 18092025-05-0054/ ուղղակի վաճառքի կարգով, հողի կադաստրային արժեքը՝ յուրաքանչյուր 1քմ՝ 141.9դրամ, վճարելու պայմանով օտարել «ՊՐԵԶԻԴԵՆՏ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ին:
2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 23
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**23 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1997-Լ**

## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ, ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, Սևան համայնքի ավագանու՝ 15.04.2025թ. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի ավագանու՝ 2024 թվականի դեկտեմբերի 17-ի՝ «Սևան համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N170-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N40-Ն որոշման պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Սևան համայնքի 2025թվականի բյուջեի եկամուտների եռամսյա բաշխման համամասնությունները՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել Սևան համայնքի 2025թվականի բյուջեի ծախսերի եռամսյա բաշխման համամասնությունները՝ համաձայն հավելված 2-ի:
3. Հաստատել Սևան համայնքի 2025թվականի բյուջեի ծախսերի կատարման համապատասխան նախահաշիվները:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 23
ք.Սևան

Հավելված N1
Հաստատված է
ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի ղեկավարի
23.09.2025թ. թիվ 1997-Է որոշմամբ

# ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԸՍՏ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ

ՀԱԶ. ԴՐԱՄ

| Տող ի NN | Եկամտատեսակների անվանումները | տարի | այդ թվում ըստ եռամսյակների | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | I եռամսյակ | I կիսամյակ | 9 ամիս | տարեկան |
| Ա | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ | 2210642.4 | 552660.6 | 1105321.2 | 1657981.8 | 2210642.4 |
| | այդ թվում՝ | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 1 | ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ | 502730.0 | 125682.5 | 251365.0 | 377047.5 | 502730.0 |
| *1* | *Գույքային հարկեր անշարժ գույքից* | *177300.0* | 44325.0 | 88650.0 | 132975.0 | 177300.0 |
| 1.1.1. | Աշարժ գույքի հարկ | 167800.0 | 41950.0 | 83900.0 | 125850.0 | 167800.0 |
| 1.1.2 | Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | 4500.0 | 1125.0 | 2250.0 | 3375.0 | 4500.0 |
| 1.1.3 | Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 5000.0 | 1250.0 | 2500.0 | 3750.0 | 5000.0 |
| 1120 | 1.2 Գույքային հարկեր այլ գույքից | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 1.2 | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 290000.0 | 72500.0 | 145000.0 | 217500.0 | 290000.0 |
| *1.3* | *Տեղական տուրքեր* | *22930.0* | 5732.5 | 11465.0 | 17197.5 | 22930.0 |
| 1.3.1 | քաղաքաշինության գծով | 13900.0 | 3475.0 | 6950.0 | 10425.0 | 13900.0 |
| 1.3.2 | Առևտրի և սպասարկումների գծով | 9030.0 | 2257.5 | 4515.0 | 6772.5 | 9030.0 |
| 1.4 | Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր, որից | *12500.0* | 3125.0 | 6250.0 | 9375.0 | 12500.0 |
| 1.4.1 | ՔԿԱԳ բաժնի գծով | 3500.0 | 875.0 | 1750.0 | 2625.0 | 3500.0 |
| 1.4.2 | Նոտարական գրաս. գծով | 9000.0 | 2250.0 | 4500.0 | 6750.0 | 9000.0 |
| *2.* | *Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից* | *1605440.3* | 401360.1 | 802720.2 | 1204080.2 | 1605440.3 |
| 2.1 | Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիա | 1603043.5 | 400760.9 | 801521.8 | 1202282.6 | 1603043.5 |
| 2.2 | Մուտքեր ՀՀ Էկոնոմիկայի նախարարությինից՝ աշնանացան ցորենի արտադրութ. խթանման ծրագրի համար | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2.3 | Պետ. բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամ. նպ. հատ./սուբվենցիա/ | 2396.8 | 599.2 | 1198.4 | 1797.6 | 2396.8 |
| *3* | *ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ* | *100245.1* | 25061.3 | 50122.6 | 75183.8 | 100245.1 |
| 3,1 | Գույքի վարձակալությունից եկամուտ | 22090.0 | 5522.5 | 11045.0 | 16567.5 | 22090.0 |
| 3.1.1. | Համայնքի սեփ. համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | 10000.0 | 2500.0 | 5000.0 | 7500.0 | 10000.0 |
| 3.1.2 | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետ. սեփ. համարվող հողերի վարձ. վարձավ. | 5890.0 | 1472.5 | 2945.0 | 4417.5 | 5890.0 |
| 3.1.3 | Համայնքի վարչ. կար. գտնվող պետ. և համ. սեփակ. ժատ. հող. կառուց. իր. դիմաց գանձվող վարձավճարներ | 3200.0 | 800.0 | 1600.0 | 2400.0 | 3200.0 |
| 3.1.4 | Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | 3000.0 | 750.0 | 1500.0 | 2250.0 | 3000.0 |

Հավելված N2
Հաստատված է
ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի ղեկավարի
23.09.2025թ. թիվ 1997-Լ որոշմամբ

## ՀԱՄԱՅՆՔԻ 2025Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱ ԲԱՇԽՈՒՄԸ

| բաժին | խումբ | դաս | ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | տարի | այդ թվում ըստ եռամսյակների | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | I եռամսյակ | I կիսամյակ | 9 ամիս | տարի |
| 01 | 1 | 1 | Համայնքի ղեկավարի աշխատակազմ | 405044.0 | 101261.0 | 202522.0 | 303783.0 | 405044.0 |
| 01 | 3 | 3 | ՔԿԱԳ բաժնի պահպանման գծով ծախսեր | 2227.2 | 556.8 | 1113.6 | 1670.4 | 2227.2 |
| 01 | 6 | 1 | Ընդանուր բնույթի հանրային ծառ, | 162561.2 | 40640.3 | 81280.6 | 121920.9 | 162561.2 |
| 04 | 0 | 0 | Ճանապ. տնտես. գծով ընթացիկ ծախսեր | 6400.0 | 1600.0 | 3200.0 | 4800.0 | 6400.0 |
| 04 | 2 | 1 | Գյուղատնտեսություն | 2810.0 | 702.5 | 1405.0 | 2107.5 | 2810.0 |
| 04 | 2 | 1 | Ծաղկունքի ջրամատակարարում | 3000.0 | 750.0 | 1500.0 | 2250.0 | 3000.0 |
| 05 | 1 | 1 | **Աղբահանություն**<br>Սուբսիդիա <<ՍՀԿՍ և Բ>> ՀՈԱԿ | 380000.0 | 95000.0 | 190000.0 | 285000.0 | 380000.0 |
| 05 | 1 | 1 | Դրամաշնորհ << Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ>> ՍՊԸ | 20000.0 | 5000.0 | 10000.0 | 15000.0 | 20000.0 |
| 05 | 4 | 1 | Կենսաբազմազանության և բնության պաշտպանության | 5000.0 | 1250.0 | 2500.0 | 3750.0 | 5000.0 |
| 06 | 1 | 1 | Բնակ. տնտես. գծով ընթացիկ ծախսեր | 8000.0 | 2000.0 | 4000.0 | 6000.0 | 8000.0 |
| **08** | **0** | **0** | **Մ Շ Ա Կ ՈՒ Յ Թ, այդ թվում** | **75700.0** | 18925.0 | 37850.0 | 56775.0 | 75700.0 |
| 08 | 2 | 1 | Սուբսիդիա ,, ԳԿՀ,, ՀՈԱԿ | 23000.0 | 5750.0 | 11500.0 | 17250.0 | 23000.0 |
| 08 | 2 | 3 | Սուբսիդիա "ՀՄԿ>> ՀՈԱԿ | 36000.0 | 9000.0 | 18000.0 | 27000.0 | 36000.0 |
| 08 | 2 | 4 | Մշակութային միջոցառումների կազմակերպման գծով ծախսեր | 6100.0 | 1525.0 | 3050.0 | 4575.0 | 6100.0 |
| 08 | 3 | 1 | Տեղեղեկատ. ծառ. ձեռք բերում՝ | 5500.0 | 1375.0 | 2750.0 | 4125.0 | 5500.0 |
| 08 | 3 | 2 | Ընթացիկ դրամ. հրատարակչություն. խմբագրություններին | 2100.0 | 525.0 | 1050.0 | 1575.0 | 2100.0 |
| 08 | 4 | 2 | Նվիրատվություններ ՀԿ | 3000.0 | 750.0 | 1500.0 | 2250.0 | 3000.0 |
| **09** | **0** | **0** | **ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, այդ թվում** | **504000.0** | 126000.0 | 252000.0 | 378000.0 | 504000.0 |
| **09** | **1** | **0** | **Նախադպրոցական կրթություն, որից** | **368000.0** | 92000.0 | 184000.0 | 276000.0 | 368000.0 |
| 09 | 1 | 1 | Սուբսիդիա թիվ 1 "Բողբոջ" մ/մ ՀՈԱԿ | 48000.0 | 12000.0 | 24000.0 | 36000.0 | 48000.0 |
| 09 | 1 | 1 | Սուբսիդիա թիվ 2"Զարթոնք" մ/մ ՀՈԱԿ | 53000.0 | 13250.0 | 26500.0 | 39750.0 | 53000.0 |
| 09 | 1 | 1 | Սուբսիդիա թիվ 3 " Հեքիաթ" մ/մ ՀՈԱԿ | 62000.0 | 15500.0 | 31000.0 | 46500.0 | 62000.0 |
| 09 | 1 | 1 | Սուբսիդիա թիվ 4 " Գալիք" մ/մ ՀՈԱԿ | 46000.0 | 11500.0 | 23000.0 | 34500.0 | 46000.0 |
| 09 | 1 | 1 | Սուբսիդիա Գագարինի մ/մ ՀՈԱԿ | 21000.0 | 5250.0 | 10500.0 | 15750.0 | 21000.0 |
| 09 | 1 | 1 | Սուբ. "Վարսերի մանկապարտեզ" ՀՈԱԿ | 20000.0 | 5000.0 | 10000.0 | 15000.0 | 20000.0 |
| 09 | 1 | 1 | Սուբ. "Լճաշենի մանկապարտեզ" ՀՈԱԿ | 36000.0 | 9000.0 | 18000.0 | 27000.0 | 36000.0 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**23 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1998-Ա**

## ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով և 3-րդ կետերով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Աշոտ Գալստյանի լիազոր անձ Արտավազդ Գալստյանի դիմումը՝ Սևանի քաղխորհրդի գործադիր կոմիտեի 1990թ. մայիսի 31-ի թիվ 7 նիստի որոշմամբ Աշոտ Գալստյանին՝ ք. Սևան, Նոր թաղ թաղամաս հասցեում անհատական բնակելի տան կառուցման համար հատկացված 600քմ մակերեսով հողատարածքից ավել օգտագործված հողատարածքն իրեն տրամադրելու մասին, հաշվի առնելով որ հողատարածքը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը՝ **որոշում եմ.**

1. Սևանի քաղխորհրդի գործադիր կոմիտեի՝ 1990թ. մայիսի 31-ի թիվ 7 նիստի որոշմամբ Աշոտ Շալիկոյի Գալստյանին /ծնված՝ 18.01.1960թ./ հատկացված 600քմ մակերեսով հողատարածքին կից գտնվող 120քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ ճանաչել Աշոտ Գալստյանի սեփականության իրավունքը՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Հ.Այվազովսկու փողոց թիվ 10 հողամաս հասցե:
2. Աշոտ Գալստյանին պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Հ. Այվազովսկու փողոց թիվ 10 հասցեում գտնվող 720քմ մակերեսով հողատարածքին կից գտնվող 67.0քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, տրամադրել Սևան համայնք ք. Սևան Հ.Այվազովսկու փողոց թիվ 12 / 1 հողամաս հասցե, ուղղակի վաճառքի կարգով՝ հողի կադաստրային արժեքի 30% վճարելու պայմանով /1քմ՝ 962.5 դրամ/ օտարել Աշոտ Շալիկոյի Գալստյանին:
3. Պետական գրանցման, այդ թվում՝համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 23
ք.Սևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**23 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 1999-Ա**

## ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՆՔՆԱԿԱՄ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Գալուստ Կյուրեղյանի դիմումը՝ Դդմաշեն համայնքի հողային բարեփոխումների սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի՝ 20.04.1992թ. N 12 նիստի որոշմամբ՝ Գալուստ, Ալվարդ, Բալաբեկ, Արսեն և Սուրիկ Կյուրեղյաններին անհատական բնակելի տան կառուցման համար հատկացված 5000քմ մակերեսով հողատարածքը, հողատարածքում մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին, նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Դդմաշեն համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի՝ 20.04.1992թ. N 12 նիստի որոշմամբ՝ Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնքում գտնվող, անհատական բնակելի տան կառուցման համար Գալուստ Ավետիքի Կյուրեղյանին / ծնված՝ 01.06.1951թ./, Ալվարդ Վաղարշակի Կյուրեղյանին /ծնված՝ 04.02.1956թ./, Բալաբեկ Գալուստի Կյուրեխյանին /ծնված՝ 18.07.1975թ./, Արսեն Գալուստի Կյուրեղյանին /ծնված՝ 21.11.1976թ./, Սուրիկ Գալուստի Կյուրեղյանին /ծնված՝ 19.06.1982թ./ սեփականաշնորհված 5000քմ մակերեսով հողատարածքին կից գտնվող 136.4քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ ճանաչել Գալուստ, Ալվարդ, Բալաբեկ, Արսեն և Սուրիկ Կյուրեղյանների սեփականության իրավունքը:
2. Գալուստ, Ալվարդ, Բալաբեկ, Արսեն և Սուրիկ Կյուրեղյաններին պատկանող 5136.4քմ մակերեսով հողատարածքում 1967թ. կառուցված 157.47 քմ մակերեսով բնակելի տունը /ներքին մակերեսը՝ 114.03քմ/, 8.65քմ մակերեսով կաթսայատունը /ներքին մակերեսը՝ 6.24քմ/, 147.62քմ մակերեսով տնտեսական շինությունը՝ N1 /ներքին մակերեսը՝ 98.85քմ/, 134.93քմ մակերեսով տնտեսական շինությունը՝ N2 /ներքին մակերեսը՝ 133.29քմ/, 117.11քմ մակերեսով անասնաշենքը /ներքին մակերեսը՝ 97.67քմ/, 45.06քմ մակերեսով ծածկերը և 38.32քմ մակերեսով

պարիսպը ճանաչել Գալուստ, Ալվարդ,Բալաբեկ, Արսեն և Սուրիկ Կյուրեղյանների սեփական գույքը՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Դդմաշեն 12-րդ փողոց թիվ 2 բնակելի տուն հասցե:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 23
ք.Սևան